ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 134

" 11 " դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Յարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր 13 էջ:

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4272-12
«14» 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"_05_" դեկտեմբերի 2012թ. N 25

# ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 7 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Աբգարյան Գ.
Զուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա.
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ Հովհաննիսյան Գ.
Քարտուղար Իսահակյան Վ.

Հավանված

Գետաշեն համայնքի ավագանու

05.12. 2012թ. 7-րդ նիստի N 25 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

25. Ավագանու N 7 նիստի օրակարգի հաստատման մասին (Զեկ. նիստի քարտուղար Իսահակյան Վ.)

26. Գետաշեն համայնքի մի քանի անապահով ընտանիքների սոց-օգնություն տրամադրելու մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան)

27. Գույքահարկի արտոնություն տալու մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան):

28-Ն. Գետաշեն համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերի մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան)

29. Գետաշեն գյուղական համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատելու մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան )

30. Գետաշեն գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին (Զեկ. համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան ):

31-Ն. Գետաշեն գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին (Զեկուցող՝ Ս. Թադևոսյան՝ առաջատար մասնագետ):

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ*

---

*"05" դեկտեմբերի 2012թ.* *N 26*

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑ-ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝

### ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին Գետաշեն համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ ֆինանսական օգնություն սոց-օգնության ֆոնդից 50000 (հիսուն հազար)- ական դրամ՝ Գրիգորյան Ռուդիկ Վահանի, Սարգսյան Լիլիթ Մինասի, Հակոբյան Ղևոնդ Կոլյայի ,Հովհաննիսյան Սարգիս Արկադիյայի, Սահակյան Հայկանուշ Վանուշի; 30000 (երեսուն հազար) – ական դրամ՝ Ավագյան Թանգանուշ Ռոբերտի, Մուրադյան Մարինե Մնացականի, Արշակյան Ջեմմա Թորգոմի, Մուրադյան Քաղցրիկ Վահանի, Պողոսյան Թամարա Սամվելի, Եփրեմյան Հռիփսիկ Եղիշի, Սանասարյան Մասուն Նորիկի, Գրիգորյան Հրանտ Գևորգի, Նշանյան Վարազդատ Կարապետի, Թովմասյան Գեղամ Արտաշի, Մեղրակյան Հարություն Կոլյայի, Խաչատրյան Կարապետ Ավետիսի, Արզումանյան Ատրուշան Գևորգի, Մկրտչյան Փառանձեմ Միխայելի, Սարգսյան Շուշիկ Սերգոյի, Պողոսյան Հովհաննես Մաղաքի, Ավետիսյան Մարտուն Արամի, Անտոնյան Ժենյա Մեղրակի, Գևորգյան Կարինե Վրեժի, Ոսկանյան Գալինա Հրաչիկի, Անտոնյան Հրայր Հարությունի, Նազարեթյան Սոֆիկ Յոլակի, Պետրոսյան Հենզելիկ Ռուբենի, Մանուկյան Ռիմա Գևորգի, Սահակյան Հրանտ Լևոնյուշի. ընդամենը՝ 1000000 (մեկ միլիոն) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Աբգարյան Գ.
Զուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա.
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.

Քարտուղար՝ Իսահակյան Վ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ*

---

*"05" դեկտեմբերի 2012թ.* *N 27*

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության "Գույքահարկի մասին" օրենքի 4-րդ գլխի 15-րդ հոդվածի 3-րդ կետը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին Գետաշեն համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ գույքահարկի արտոնություն անձնական օգտագործման մեքենաների համար՝ Ղևոնդյան Վարդանուշ Սարգսի. ԳԱԶ-21, պետհամարանիշը՝ 29 SL 332, 11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) դրամ և Պողոսյան Արմինե Մնացականի. ԳԱԶ 31-10, պետհամարանիշը՝ 14 SO 473, գումարը՝ 20000 (քսան հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Աբգարյան Գ.
Զուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա.
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.

Քարտուղար՝ Խաչակյան Վ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"05" դեկտեմբերի 2012թ. N 28-Ն

# ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշեն գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ՝

Աբգարյան Գ.
Զուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.

Քարտուղար Իսահակյան Վ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքեր և շինություններ /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝
1.մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական, և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:
2.սույն կետի /ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա/ 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ.
բ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.
գ/ 1001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3.մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.
4. 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
2. Համայնքի վարչական տարածքում շենքների, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքների գործառական նշանակության փոփոխության 1000 /հազար/ դրամ.
2. բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության, բացի սույն կետի "1" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա. այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համրար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համրար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 /հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 /հարյուր հազար/ դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել

1) ալկոհոլային ապիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող

արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը բաւն և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հազար/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ:

12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ:

13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*"05" դեկտեմբերի 2012թ.* *N 29*

ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 196 000 (մեկ հարյուր իննսունվեց հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Աբգարյան Գ.

Ջուլոյան Խ.

Կոստանյան Գ.

Մովսիսյան Հ.

Սահակյան Ա.

Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.

Քարտուղար՝ Խաչիկյան Վ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"05" դեկտեմբերի 2012թ. N 30

## ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2013 թվականի համար համաձայն հաստատված հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Արզաքյան Գ.
Ձուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.

Քարտուղար՝ Իսահակյան Վ.

*Հավելված*

*Գետաշենի գյուղապետարանի աշխատակազմի*

*2013 թ. հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

| | | |
|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | 196 000 դրամ |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 143 000 դրամ |
| | **Ընդամենը** | **339 000 դրամ** |
| 1. | Աշխատակազմի քարտուղար (1-2-1) | 120 000 դրամ |
| 2. | Առաջատար մասնագետ (3-1-1) | 110 000 դրամ |
| 3. | Առաջատար մասնագետ (3-1-2) | 110 000 դրամ |
| 4. | Առաջին կարգի մասնագետ (3-2-1) | 62 500 դրամ |
| 5. | Առաջին կարգի մասնագետ (3-2-2) | 62 500 դրամ |
| 6. | Երկրորդ կարգի մասնագետ (3-3-1) | 56 500 դրամ |
| 7. | Երկրորդ կարգի մասնագետ (3-3-2) | 56 500 դրամ |
| | **Ընդամենը** | **578 000 դրամ** |
| 1. | Կուլտուրայի տան տնօրեն | 46 300 դրամ |
| 2. | Գրադարանի վարիչ | 46 300 դրամ |
| 3. | Կուլտուրայի տան գեղմասվար | 62 500 դրամ |
| | **Ընդամենը** | **155 100 դրամ** |
| 1. | Հավաքարար | 46 300 դրամ |
| 2. | Պահակ | 46 300 դրամ |
| 3. | Մշակույթի տան այգեգործ | 46 300 դրամ |
| 4. | Էլեկտրիկ | 46 300 դրամ |
| 5. | Գործավարուհի | 56 500 դրամ |
| | **Ընդամենը** | **241 700 դրամ** |
| | ***Ամբողջը*** | ***1 313 800 դրամ*** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

"05" դեկտեմբերի 2012թ. N 31-Ն

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության 2002թվականի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Բյուջետային Համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի օրենքի 32-րդ հոդվածով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշեն գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով - 42164.3 հազար դրամ

բ) ծախսերի գծով - 42164.3 հազար դրամ

գ) տարեվերջի հավելուրդը և հավելուրդի օգտագործման ուղղությունները.

Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամտատեսակների համաձայն

հավելված 1-ինի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն

հավելված 2-ի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ տնտեսական դասակարգման՝ համաձայն

հավելված 3-ի

Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը՝ համաձայն

հավելված 4-ի

Հաստատել հավելուրդի օգտագործման ուղղությունները, համաձայն

հավելված 5-ի

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն

հատված 6-ի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման ծախսեր նախատեսված հոդվածների միջև:
3. Սահմանել, որ փոփոխման հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 % -ը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ Արզաբյան Գ.
Զուլոյան Խ.
Կոստանյան Գ.
Մովսիսյան Հ.
Սահակյան Ա.
Սանասարյան Գ.

Նիստի նախագահ՝ Հովհաննիսյան Գ.
Քարտուղար՝ Խաչակյան Վ.